

ԻՆՉՊԵՐՍ ՆԿԱՐԵՑԻ ՄԱՐՈՅԵԱՆԸ

Գրեց ՓՈԼ ԳԱԼԻՆԵԱՆ

1964ին, Ֆրէզնո, Գալիֆորնիա փոխադրուելէս ետք, մէջս մեծ տենշանք մը կար ծանօթանալու Ուիլիլիմ Սարոյեանին: Իբր լուսանկարիչ, կ'ուզէի մօտէն ճանչնալ մեր հռչակաւոր հայորդին, նկարել իր բնական զգացումները եւ իւրայատուկ ոգին, նկարներու միջոցով զանոնք պահպանելու համար: Սակայն, այնպէս մը կ'երեւար թէ Սարոյեան լուսանկարչական գործիքին առջեւ զիրք առնելուն հակառակ էր: Սարոյեանը գտնելու բազմաթիւ ապարդիւն փորձեր կատարելէ ետք, վերջապէս առիթը ստեղծուեցաւ իրեն հանդիպելու:

Օր մը, Սարոյեանը նկարելու կարելիութեան մասին կը զրուցէի քանդակագործ Վարազ Սամուէլեանի հետ, որ լաւ բարեկամս էր: Վարազը Սարոյեանին մօտիկ բարեկամը ըլլալով՝ զաղափարը յղացայ լուսանկարչական գործիքս ու լոյսերը տեղաւորել իր արուեստանոցին մէջ, այն ակնկալութեամբ թէ պիտի կարենայի Սարոյեանը նկարել երբ այցելութեան գար հոն: Ուրախացայ երբ Վարազ իր հաւանութիւնը տուաւ այս գաղափարին:

26 Մարտ 1976ը յիշատակելի օր մըն էր, որովհետեւ այդ օրն էր, որ Վարազ հեռաձայնեց ինձի, ըսելու համար թէ Սարոյեան Ֆրէզնո կը գտնուէր եւ հաւանաբար այցելութիւն մը պիտի տար իրեն: Ամիջապէս գացի Վարազին արուեստանոցը, որ կը գտնուէր Ֆրէզնոյի կեդրոնը - Սէն Պէնիթոյի եւ «Օ» փողոցներու անկիւնը - եւ շուտով տեղաւորեցի լուսանկարչական գործիքս եւ լոյսերը:

Քանի մը ժամ ետք, Սարոյեան հասաւ հեծանիւով: Անաւարտ քանդակներու կտեր կեցած՝ ուշադրութեամբ կը զննէի զինքը, բաւական յուզուած ու սպասողական վիճակի մէջ. մինչդեռ Սարոյեան եւ Վարազ բարձրաձայն, բայց ջերմօրէն կ'ողջադուրուէին ու կը համբուրուէին սովորական հայկական ոճով: Իրենցմէ շատ հեռու չէի կեցած եւ հակառակ որ Սարոյեան տեսաւ զիս, մասնաւոր ուշադրութիւն չդարձուց վրաս:

Առանց ժամանակ կորսնցնելու, ձեռքս երկարեցի եւ անգլերէնով ինքզինքս ներկայացուցի՝ իբր լուսանկարիչ: Խնդրեցի Սարոյեանէն որ արտօնութիւն

տայ իր նկարը քաշելու:

- «Կորսուէ՛» ըսաւ Սարոյեան: «Բայց Պր. Սարոյեան, ես ...»

Փորձեցի բացատրել, սակայն ձայնս խեղդուեցաւ իր զորդիւն պատասխանին մէջ:

«Ո՛չ ըսի, ականջդ ծա՛նր է, ի՛նչ է: Որեւէ նկար չեմ ուզեր»:

«Բայց ինչո՞ւ» հարցուցի:

Շիտակ աչքերուս մէջ նայելով, պատասխանեց. «Չեմ ուզեր որ նկարս քաշուի. մոռցի՛ր»: Յետոյ, Վարազին դառնալով ըսաւ. «Ո՛վ է այս մարդը: Ինչո՞ւ այսքան կը պնդէ»:

«Ուիլի, ինքը լա՛ւ նկարահան է» ըսաւ Վարազ:

Պահ մը ետք, Սարոյեանի ուշադրութիւնը դարձաւ զանազան արուեստի գործերուն վրայ: Գլխով նշան ըրի Վարազին եւ մեղմ ձայնով ըսի.

«Վարազ .. մտիկ ըրէ՛ ... զինքը առաջնորդէ՛ դէպի արուեստանոցդ, ուր լուսանկարչական գործիքներս տեղաւորած եմ»:

«Օքէյ ... օքէյ» ըսաւ Վարազ:

Կէս ժամ ետք, երբ երկուքը արուեստանոց մտան, Սարոյեան նկատեց զիս եւ լուսանկարչական գործիքներս: Տհաճութեան ու անհանգստութեան արտայայտութիւն մը երեւցաւ դէմքին վրայ:

«Նկարս կը քաշես» բացազանչեց Սարոյեան:

Ըսի. «Ո՛չ, Պր. Սարոյեան, լոյսերս կը փորձեմ: Գործիքիս մէջ ֆիլմ նոյնիսկ չկայ»:

Աւելի մօտեցաւ եւ խնդրեց որ լուսանկարի գործիքս բանամ: Երբ բացի գործիքս եւ իրեն ցոյց տուի պարաս ֆիլմակալը, վերջապէս հանգստացաւ եւ նստաւ սնտուկի նման սեղանի մը վրայ, որ գործիքիս ճիշդ առջեւը գրուած էր: Առանց իր գիտնալուն նախապէս լեցուած ֆիլմակալ մը, արագօրէն կ'սպասեցի գործիքիս:

Ժամանակը որ կ'անցնէր, Սարոյեան հետզհետէ վստահութիւն կ'ունենար իմ վրաս: Սկսաւ ինձմով հետաքրքրուիլ, ու խնդրեց որ հայերէն խօսիմ, ծննդավայրիս՝ Լիբանանի հայերու մասին: Մինչ այդ՝ բազմաթիւ գաղտնի նկարներ քաշեցի հայերէն լեզուով առինքնող ու ջերմ գրոյցներու ընթացքին:



Փոլ Գալինեան եւ իր դուստրը Սուզի Գալինեան:

Յետոյ, Սարոյեան խնդրեց որ հայկական հին երգ մը - «Կիլիկիա» - երգեմ: Այս երգը միասին երգելով աւելի յուզուեցանք: Իրեն համար դժուար էր զսպել աչքերուն մէջ լեցուող արցունքները:

«Քեզ հաւնեցայ, Փոլ» ըսաւ Սարոյեան. «Հիմա ուզածիդ շափ կրնաս նկարս քաշել»: Նախքան այս ազնուութիւնը արտայայտելը, արդէն բաւական նկար քաշած էի:

Երկու շաբաթ ետք, Սարոյեան արհեստանոցս եկաւ հեծանիւով: Պատէն կախուած իր դիմանկարներէն մէկուն նայելով, ըսաւ. «Դէմքս այսպիսի արտայայտութեան մէջ երբեք չեմ տեսած ...» բարձրաձայն խնդաց ... յետոյ գրպանէն հանեց իր գիրքերէն օրինակ մը, «Մի՛ Երթար, Բայց Եթէ Երթաս, Բարեւ Տուր Ամէնուն» վերնագրով ու մակագրեց զայն «Փոլ Գալինեանին՝ մեծ լուսանկարիչ-արուեստագէտին համար: Անկեղծօրէն, Ուիլիլիմ Սարոյեան, Ֆրէզնո, 8 Ապրիլ, 1976»: Գիրքը տուաւ ինձի ու գնաց:

Մեր բարեկամութիւնը սկսաւ:

Այնուհետեւ, բազմաթիւ անգամներ այցելութիւններ տուինք իրարու: Թէեւ երբեմն կ'աճապարէր, երբ աշխատանոցս այցելէր, սակայն միշտ ուրախ էի եւ պատիւ կը զգայի իրեն հետ խօսելու եւ զինքը նորէն տեսնելու առիթը ունենալուս համար:

Վարազ, շնորհակալ եմ, որ զիս ծանօթացուցիր Ուիլիլիմ Սարոյեանին:



Սարոյեանի դիմանկարով Ամերիկայի եւ Ռուսիոյ մէջ շրջագայութեան դրուած նամակաղրոշմներուն վրայ գործածուած են Գալինեանի լուսանկարները: